

COVID - 19. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՏՎԱԾԱՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

ԳԻՐԳԻ ԳԱՆԱՐԻԱ. «ՄԵՆՔ ԿԱՊԱՅՈՒՅԵՆՔ, ՈՐ ԿԱՐՈՂ ԵՆՔ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐԵԼ ՃԳՆԱԺԱՄԸ, ՀԱՐՄԱՐՎԵԼ, ՀԶՈՐԱՅՆԵԼ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ»

Հունիսի 1-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի ղեկավարությամբ անցկացվեց միջգերատեսչական համակարգով խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվեց սահմանափակումների չեղարկման հերթական փուլը:



Մասնավորապես նշվեց, որ գործունեությունը վերակսելու թույլտվություն է տրվում բոլոր տեսակի բաց խանութներին, առևտրական կենտրոններին, բաց եւ փակ շուկաներին ու բաց տարածք ունեցող ռեստորաններին: Նշվեց, որ մայիսի 29-ից սկսել են գործել հասարակական տրանսպորտի բոլոր միջոցները: Նիստում առանձնակի ընդգծվեց, որ սահմանափակումների չեղարկումը մեծապես պայմանավորված է քաղաքացիների սոցիալական եւ տնտեսական շահերով, թեպետ անհրաժեշտ է խստորեն պահպանել համապատասխան կանոններն ու հանձնարարա-

քաղաքացիների սոցիալական եւ տնտեսական շահերով, թեպետ անհրաժեշտ է խստորեն պահպանել համապատասխան կանոններն ու հանձնարարա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՓՈՓՈՒՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ «ՄԵԿՈՒՍԱՅՄԱՆ ԵՎ ԿԱՐԱՆՏԻՆԻ ԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ

50 ԼԱՐԻԻ ՏՈՒԳԱՆՔ՝ ԴԻՄԱԿ ԶԿՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Վրաստանի կառավարության որոշման մեջ փոփոխություններ են մտցվել «Սեկուսացման եւ կարանտինի կարգի հաստատման մասին»:

Ըստ փոփոխությունների, հունիսի 8-ից թույլատրելի է դառնում բոլոր տեսակի տնտեսական

գործունեությունը՝ բացառությամբ սպորտային, մշակութային եւ ժամանցային միջոցառումների կա-

մակերպման/անցկացման, թույլատրելի է դառնում միջքաղաքային ուղեւորափոխադրումը՝ M2 եւ M3 կատեգորիայի ավտոտրանսպորտով: Միաժամանակ, փոփոխություն (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԻՆՉ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԿՎԵՐԱԿԱՆԳՆՎԵՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՈՒԹՅԱՆ ԶԵՂԱՐԿՎԱԾ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԸ ԴԱՐՁԱԲԱՆՈՒՄ ԵՆ

Մայիսի 23-ից՝ արտակարգ իրավիճակի վերացումից հետո անցած ժամանակահատվածում, երկրում բացահայտվել են կորոնավիրուսով վարակման նոր դեպքեր, իսկ մայիսի 31-ին վավերացվեց ռեկորդային թվով՝ 28 վարակման նոր փաստ:

Բնականաբար, վարակման դեպքերի ավելացումն անհանգստություն է առաջացրել բնակչության շրջանում: Փորձագետների որոշակի մասը գտնում է, որ կառավարությունը շտապել էր սահմանափակումների չեղարկումը հայտարարել, եւ խոսում է դրանց որոշակի մասի վերականգնման մասին: Հարց է ծագում, թե Վրաստանում ինչ պայմաններում է հնարա-

վոր արտակարգ դրության եւ դրանով պայմանավորված սահմանափակումների վերականգնում: Ի պատասխան թերթի առաջադրած հարցին, Վրաստանի հիվանդությունների վերահսկողության ու հասարակական առողջապահության ազգային կենտրոնի տնօրեն Ամիրան Գամդելիձեն նշեց, որ (Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎԱՐԴԱՏՈՆ - 106

ԹԲԻԼԻՍԻՆ ԵՎ ԹԲԻԼԻՍԻՅԻՆԵՐԸ ՏՈՆԵՅԻՆ ՎԱՐԴԱՏՈՆԸ

Նոր կորոնավիրուսի լայնածավալ տարածումը աշխարհի երկրներում, այդ թվում՝ Վրաստանում, սահմանված սահմանափակումներն իրենց մեջ ներառեցին նաեւ ավանդական Վարդատոնը: Սկսած 1914 թվականից մայիսի վերջին կիրակի օրը, մեծ զուսան Սայաթ-Նովային նվիրված երգով ու ասնունըրով ուղեկցվող այս միջոցառումն այս տարի անցկացվեց սահմանափակումների շրջանակներում ու պակաս հանդիսավորությամբ:



Չնայած երկրում գործող սահմանափակումներին, Վրահայոց թեմի նախաձեռնությամբ եւ «Վրաստանի հայերի միության» աջակցությամբ, թբիլիսահայերը վերստին հնարավորություն ունեցան ավանդաբար մայիսի վերջին կիրակի օրը կարմիր վարդեր խոնարհել մեծանուն աշուղ եւ ժողովուրդների բարեկամության երգիչ Սայաթ-Նովայի շիրմին:

Մայիսի 31-ին, Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջ- (Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՎՐԱՍԱՆ- ՀԱՅԱՍՏԱՆ

«ԹԱՆԿԱԳԻՆ ՆԻԿՈՒ, ՄՐՏԱՆՉ ԸՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՄ, ՄԱՂԹՈՒՄ ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ, ՀԱՉՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՄԵՆԱՅՆ ԲԱՐԻՔ»



Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի ծննդյան 45-ամյակի կապակցությամբ, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան շնորհավորական ուղերթ է հղել



գործընկերոջը, որտեղ ասված է.

«Թանկագին Նիկոլ, ցանկանում եմ շնորհավորել Ձեզ՝ ծննդյան օրվա առթիվ, մաղթել առողջություն, ամենայն բարիք եւ հաջողություններ Ձեր անչափ պատասխանատու ու բարդ գործում: Օգտվելով առիթից՝ հույս եմ հայտնում, որ Վրաստանի եւ Հայաստանի միջեւ առկա սերտ կապերն ու հարաբերությունները, որոնք հիմնված են ավանդական բարեկամության եւ փոխըմբռնման վրա, ապագայում եւս կխորանան ու կզարգանան՝ ի բարօրություն մեր ժողովուրդների եւ ի հաշիվ մեր երկրների շահերի: Ցանկանում եմ կրկին հավաստիացնել իմ խորին հարգանքը Ձեր հանդեպ եւ արտահայտել պատրաստակամությունս մեր երկրների միջեւ համագործակցության ավելի ամրապնդման գործում: Պարոն վարչապետ, կրկին սրտանց շնորհավորում եմ, անկեղծորեն մաղթում առողջություն, հաջողություններ եւ ամենայն բարիք»,- ասված է Գիորգի Գախարիայի ուղերթում: Հայաստանի վարչապետին ծննդյան օրվա առթիվ շնորհավորել է նաեւ Վրաստանի նախագահ Սալոմե Ջուրաբիշվիլին:

ՎՐԱՍԱՆԸ ԴԱՏՐԱՍ Ե ՕԳՆՈՒԹՅԱՆ ԶԵՌՔ ՄԵՎՆԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Նոր կորոնավիրուսով պայմանավորված Վրաստանը պատրաստ է օգնության ձեռք մեկնել Հայաստանին: Այդ մասին հայտարարել է Վրաստանի ԱԳ նախարար Դավիթ Ջալկալիանին իր հայ գործընկեր Ջոհրաբ Մնացակյանի հետ հառախոսազրույցի ժամանակ:

«Հատկանշական է, որ համավարակի ժամանակ Վրաստանի կառավարությունը ինտենսիվ հաղորդակցություն մեջ է հայկական կողմի հետ: Օրեր առաջ վարչապետներ Գիորգի Գախարիան եւ Նիկոլ Փաշինյանը հեռախոսազրույց են ունեցել, տեղեկություններ հաղորդել երկրներում առկա իրավիճակների մասին: Կապի մեջ են նաեւ նախարարական մակարդակները» - ասված է Վրաստանի արտգործնախարարության հայտարարության մեջ:

սարակական գործիչներ, քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչներ: GOPETITION.COM կայքում ստեղծվել է ստորագրահավաք՝ Հայաստանին օգնելու կոչով: «Կոչ ենք անում Վրաստանի կառավարությանը քննարկել Հայաստանին օգնելու հարցն այս ծանր շրջանում: Օգնություն ասելով՝ ենթադրվում է առաջարկել Հայաստանին նրանց պացիենտներին բուժել Վրաստանում: Գտնում ենք, որ սա ճիշտ քայլ կլինի հարեւան պետությանն օգնելու եւ տարածաշրջանում իրավիճակը կայունացնելու տեսանկյունից»:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՐԱՊԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՂՈԹՔ՝ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՅՈՒՄ

Ողջ աշխարհում տարածված կորոնավիրուսի համավարակի այս օրերին, հատկապես՝ Մայր հայրենիք Հայաստանում, ահագնացող չափերով վարակվածների առողջության հույսն աղոթքով ամենագոր Աստծո գութն հայցելու աղերսն է:

Հունիսի 4-ին, Թբիլիսիի Սուրբ Գեորգ առաջնորդանիստ եկեղեցում, հավարտ երեկոյան ժամերգության, Վրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյա-

նի հանդիսատեսությամբ, բարձրացվեց ընդհանրական բժշկական աղոթք Հայաստանում վարակվածների առողջության, Մայր հայրենիքի ու ազգի փրկության համար:

